

Վարդան Վեյ  
Տիբեր Կարևորագույն

Դու կարող ես  
հաղթահարել  
ուճե՞լիս

Տիբեր Կիշի, որ ին  
կողմին կան ին  
ընդեր ներս

Ե՛վ  
Մե քամի մեղ  
եւ ամեն ինչ



Կարևորագույն

Գրեք լավագույն  
անունը քանի որ

Ժայռ

Ին սկի փուլին  
կարող ես

ԱՍԵՆ ԻՆԵ  
ԼՈՎ 5 ԻՆԵՆ

Գրեք ինչպես



# Մանկական քաղցկեղի Հոգեբանասոցիալական խնամքի չափորոշիչները



## Մանկական Քաղցկեղի Հոգեբանասոցիալական ինամքի չափորոշիչները

Նյութը մշակվել է ՀՀ ԱՆ Ռ.Յոյանի անվան Արյունաբանական Կենտրոնի Մանկական Քաղցկեղի և Արյան հիվանդությունների կենտրոնի Հոգեբանասոցիալական ծառայության կողմից՝ հիմնվելով «The Psychosocial Standards of Care Project for Childhood Cancer (PSCPCC)»-ի ամփոփիչ հաշվետվության վրա:

Չափորոշիչների մշակման նպատակը քաղցկեղ ունեցող երեխաների և իրենց ընտանիքների համար հոգեբանասոցիալական ծառայությունների տրամադրման համընդհանուր մոտեցման զարգացումն ու ապահովումն է:

:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՔԱՂՑԿԵՂԻ ԵՎ  
ԱՐՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ  
ՀՀ ԱՆ Ռ. Բ. ՅՈՒՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ԱՐՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Երևան, Հայաստան

2020



<p>1.</p>	<p>Հոգեբանասոցիալական կարիքների պարբերական գնահատում</p>	<p>Գնահատման ոլորտներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Երեխայի և ընտանիքի հոգեբանական հարմարումը (օր.՝ դիսթրես, տագնապ, դեպրեսիա և այլն)</li> <li>• Ընտանիքի ռեսուրսները (օր.՝ ֆինանսական, սոցիալ-տնտեսական ստատուս, բուժման համար խոչընդոտները)</li> <li>• Պրեմիերի գործառնականությունը (օր.՝ նախորդող սթրեսորներ, հոգեբանական խնդիրներ, հաղթահարման մեխանիզմեր)</li> <li>• Ընտանիքի կառուցվածք և միջանձնային հարաբերություններ:</li> </ul>
<p>2.</p>	<p>Նեյրոհոգեբանական խնդիրների վերահսկողություն և գնահատում բուժման ընթացքում և բուժումից հետո</p>	<p>Նեյրոհոգեբանական գնահատումը ենթադրում է բուժման հետևանքով մենտալ ստատուսի փոփոխության գնահատում: Գնահատման ոլորտները պետք է ներառեն.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ինտելեկտ</li> <li>• Ուշադրություն</li> <li>• Հիշողություն</li> <li>• Լեզու</li> <li>• Կատարողական գործառնականություն (Executive functioning)</li> <li>• Նեյրոզգայական գործառնականություն</li> <li>• Պերցեպտիվ վերամշակում</li> <li>• Վերամշակման արագություն</li> </ul>

		<ul style="list-style-type: none"> <li>• Ակադեմիական առաջադիմություն Գլխուղեղի ուռուցքներ և ԿՆՅ-ին ուղղված թերապիա ստացող երեխաների Նեյրոհոգեբանական գնահատումը պետք է իրականացնել ախտորոշման պահին և մենտալ ստատուսի սուր փոփոխությունների ժամանակ: Գնահատումը պետք է իրականացնել նաև բուժման ավարտին և բուժման ավարտից 2-3 տարի անց կամ, երբ առկա են նշանակալի ֆունկցիոնալ փոփոխություններ:</li> </ul>
<p><b>3.</b></p>	<p>Չոգեբանասոցիալական հսկողություն բուժումն ավարտած երեխաների համար</p>	<p>Բուժումն ավարտած երեխաները պետք է ունենան հետևյալ ոլորտների տարեկան գնահատում (սքրինինգ):</p> <ul style="list-style-type: none"> <li>• -Ակադեմիական կամ մասնագիտական առաջադիմություն</li> <li>-սոցիալական կամ հարաբերությունների հետ կապված դժվարություններ:</li> <li>• Դիսթրես, տագնապ և դեպրեսիա:</li> <li>• Առողջության հետ կապված ռիսկային վարքագիծ:</li> </ul> <p>Բուժման ավարտին երեխաներն ու իրենց ծնողները պետք է ստանան խորհրդատվություն հետագա հոգեբանասոցիալական հսկողության անհրաժեշտության վերաբերյալ:</p>
<p><b>4.</b></p>	<p>Չոգեբանասոցիալական աջակցություն և միջամտություններ</p>	<p>Քաղցկեղ ունեցող երեխաները և իրենց ընտանիքի անդամները պետք է ստանան</p>



	<p>Երեխաների և իրենց ընտանիքի անդամների համար</p>	<p>հոգեբանասոցիալական աջակցություն հիվանդության և բուժման ամբողջ ընթացքում: Աջակցությունը պետք է ներառի ճգնաժամային միջամտության մոտեցումները, կարող են կիրառվել հետևյալ մեթոդները:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Աջակցող հոգեթերապիա (Supportive psychotherapy)</li> <li>• Կոգնիտիվ վարքաբանական հոգեթերապիա</li> <li>• Խնդրի լուծման թերապիա (Problem solving therapy)</li> <li>• Խաղաթերապիա</li> <li>• Արտթերապիա</li> <li>• Սոցիալական աջակցման խմբեր, սոցիալական հմտությունների թրեյնինգ</li> <li>• Տրավմային ուղղված Կոգնիտիվ վարքաբանական թերապիա (trauma focused CBT)</li> <li>• Բիբլիոթերապիա</li> <li>• Գիտակցվածության վրա հիմնված թերապիա (Mindfulness based)</li> </ul>
<p>5.</p>	<p>Ընտանիքների ֆինանսական դժվարությունների գնահատում</p>	<p>Գնահատումը պետք է ներառի ֆինանսական դժվարություններ ունենալու ռիսկերին վերաբերող հետևյալ հետևյալ ոլորները.</p>



		<ul style="list-style-type: none"> <li>• Նախորդող ցածր եկամուտ կամ ֆինանսական դժվարություններ</li> <li>• Միայնակ ծնողի կարգավիճակ</li> <li>• Ծնողի զբաղվածության կարգավիճակ</li> <li>• Հիվանդանոցից հեռու բնակվելը</li> </ul> <p>Համապատասխան աջակցության աղբյուրների ուղղորդումը պետք է իրականացվի՝ հիմնվելով գնահատման արդյունքների վրա:</p>
6.	Հոգեւոցիալական աջակցություն ծնողներին	<p>Երեխաների ծնողները և խնամատարները պետք է ունենան իրենց հոգեկան առողջության վերաբերող կարիքների վաղ և շարունակական գնահատում:</p> <p>Համապատասխան աջակցությունը պետք է հասանելի լինի ծնողների և խնամատարների համար: Ընտանիքակենտրոն խնամքը պետք է ներառի հոգեբանասոցիալական ռիսկերի պարբերական գնահատում, ներառյալ ծնողի հոգեկան առողջության և հաղթահարման մեխանիզմների (քոփինգի) գնահատում:</p>
7.	Հոգեկրթում	<p>Քաղցկեղ ունեցող երեխաներին, դեռահասներին անհրաժեշտ է ապահովել հիվանդության, բուժման, սուր և հետաձգված կողմնակի ազդեցությունների, հոսպիտալիզացիայի, բժշկական միջամտությունների, հոգեբանասոցիալական հարմարման մասին տեղեկատվությամբ: Տեղեկատվական տրամադրումը պետք է հիմնված լինի պացիենտի և</p>



		<p>ընտանիքի կարիքների ու նախընտրությունների վրա, լինի երեխայի տարիքին համապատասխան և իրականացվի բուժման ամբողջ ընթացքում:</p>
<p><b>8.</b></p>	<p>Աջակցում միջամտությունների ընթացքում և ախտանիշների կառավարում</p>	<p>Երեխաները և դեռահասները պետք է ստանան տարիքին և զարգացման մակարդակին համապատասխան նախապատրաստող տեղեկատվություն բժշկական միջամտությունների վերաբերյալ և աջակցություն այդ միջամտությունների ժամանակ:</p> <p>Կարող են կիրառվել.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Բժշկական խաղ (Medical play)</li> <li>• Դիստրակցիա</li> <li>• Ռելաքսացիա</li> <li>• Ուղղորդվող վիզուալիզացիա և այլն:</li> </ul>
<p><b>9.</b></p>	<p>Սոցիալական շփումների ապահովում</p>	<p>Քաղցկեղ ունեցող երեխաները և դեռահասները պետք է ապահովված լինեն սոցիալական փոխազդեցությունների հնարավորությամբ բուժման ընթացքում՝ հաշվի առնելով պացիենտի անհատական առանձնահատկությունները՝ ներառյալ զարգացման մակարդակը, սոցիալական շփումների վերաբերյալ նախընտրությունները և առողջական կարգավիճակը:</p> <p>Սոցիալական փոխազդեցությունների ապահովումը կարող է իրականացվել աջակցման խմբերի, խմբային այլ ակտիվությունների կամ հասակակակիցների հետ շփումը խթանող այլ</p>



		միջոցառումների միջոցով, որոնք պետք է ֆասիլիտացվեն հոգեբանասոցիալական թիմի անդամների կողմից:
<b>10.</b>	Հոգեբանասոցիալական աջակցություն պացիենտի քույր-եղբայրներին	Քաղցկեղ ունեցող երեխաների քույր-եղբայրները անհրաժեշտության դեպքում պետք է ապահովված լինեն համապատասխան աջակցությամբ: Ծնողները պետք է ստանան համապատասխան տեղեկատվություն քույր-եղբայրների կարիքների և դրանց արձագանքման ձևերի, իրենց հետ հաղորդակցման ձևերի վերաբերյալ:
<b>11.</b>	Բուժման ընթացքում կրթության ապահովում և աջակցություն դպրոց վերադառնալիս	Դպրոցական տարիքի երեխաները պետք է ստանան աջակցություն կրթության կազմակերպման և դպրոց վերադառնալու հարցերում: Անհրաժեշտության դեպքում, ծնողների հետ խորհրդակցելով, դպրոցի անձնակազմին կարող է տրամադրվել խորհրդատվություն պացիենտի ախտորոշման, բուժման հնարավոր բարդությունների և երեխայի հետ հաղորդակցման առանձնահատկությունների մասին:
<b>12.</b>	Դեղորայքային հետևողականության գնահատում	Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել բուժման հետևողականության գնահատում: Գնահատումը պետք է իրականացվի երեխայի ինքնահաշվետվության և ծնողի





		<p>հաշվետվության միջոցով՝ ճշգրտելով յուրաքանչյուր նշանակված դեղամիջոցի ընդունումը կոնկրետ ժամանակահատվածի համար:</p>
<p><b>13.</b></p>	<p>Պալիատիվ խնամք</p>	<p>Անհրաժեշտության դեպքում երեխաները և ընտանիքները պետք է ապահովված լինեն կյանքի ավարտի խնամքով, որում պետք է ներգրավված լինեն հոգեբանսոցիալական թիմի անդամները:</p>
<p><b>14.</b></p>	<p>Աջակցություն և հսկողություն վշտի փուլում</p>	<p>Կորստի դեպքում աջակցությունը ընտանիքին պետք է տրամադրվի հետևյալ փուլերում.</p> <ul style="list-style-type: none"> <li>• անցում պալիատիվ խնամք</li> <li>• կյանքի ավարտի փուլ</li> <li>• մահվանից անմիջապես հետո</li> <li>• պարբերական հաճախականությամբ մահվանից հետո՝ երեք, վեց, տասներկու ամիս անց և հետագայում՝ ըստ անհրաժեշտության:</li> </ul> <p>Այս փուլերից յուրաքանչյուրում անհրաժեշտ է իրականացնել ընտանիքի կարիքների գնահատում՝ ներառյալ երկարաձգված և բարդեցված վշտի ռիսկերի գնահատում:</p>

